ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **«30» նոյեմբերի 2018թ.**
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ **Ա. Մեսրոպյան**:

Հանձնաժողովի անդամներ՝
ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ՝ **Ա. Մկոյան**:
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ **Հ.Ծատուրյան**:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ՝
Ա. Մարգարյան:

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց ձեռքբերվող ապրանքների նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	նախահաշվային գինը /դրամ/
1	Բենզին ռեգուլյար	92 619 930
2	Դիզելային վառելիք ամառային	86 580 000

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
   «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են Արտակարգ իրավիճակների նախարարության շենքում ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8 հասցեում, նոյեմբերի 30-ին ժամը 15:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	հասցեն
1	ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1
2	Ֆլեշ ՍՊԸ	ք. Երևան, Ե.Կողբացի 30

3	Մաքս Օիլ ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների փող., 8 շենք, տարածք 1/1

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցները ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը	Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Բենզին ռեգուլյար Բենզին ռեգուլյար	ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	77183275	20 %	92619930**
		Մաքս Օիլ ՍՊԸ	77183275	20 %	92619930**
		Ֆլեշ ՍՊԸ	79162333.34	20 %	94994800*
2	Դիզելային վառելիք ամառային	**ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն ՍՊԸ**	**72150000**	**20 %**	**86580000**
		Ֆլեշ ՍՊԸ	75091500	20 %	90109800*
		Մաքս Օիլ ՍՊԸ	75850000	20 %	91020000*

*Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող www.eauction.armeps.am համակարգը ավտոմատ եղանակով մերժել է նախահաշվային գները գերազանցելու հիմքով:

**Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող www.eauction.armeps.am համակարգը ավտոմատ եղանակով մերժել է նվազագույն գների հավասարության հիմքով:

6. Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հարցումներ չեն ստացվել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 17-րդ կետը:

ա) «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել **ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետը՝

ա) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

բ) ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1. Իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.
2. Հայտը ներկայացնելու տարվա և դրա նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը **ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի չկայացած գնման ընթացակարգի հայտարարության տեքստը:

1. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց ոչ ուշ, քան 2-րդ օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա. Մկոյան**

_____ **Հ.Ծատուրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Մարգարյան**